

## **Հաղորդում**

Մեծ Բրիտանիա (Շոտլանդիա և Ուելս) ՀՀ Ազգային ժողովի  
պատվիրակության կատարած ճանաչողական այցի վերաբերյալ  
/15-22-ը սեպտեմբերի 2018 թ., Էդինբուրգ, Քարդիֆ/

Հանդիպումները և քննարկումները ընթացել են երեք հիմնական թեմաների շուրջ: Այդ թեմաներն են. խորհրդարանի և բարձրագույն աուդիտորական մարմին փոխգործակցությունը, հետօրենսդրական վերահսկողության փորձը և կարգավորումները, խորհրդարաններում գործող բյուջետային գրասենյակների գործառույթներն ու լիազորությունները: Մասնավորապես անդրադարձ է կատարվել մի շարք հարցերի, որոնք հայկական կողմը նախապես ներկայացրել էր:

### **խորհրդարան-Բարձրագույն աուդիտորական մարմին փոխգործակցություն**

Հաշվեքննիչ մարմինը Հաշիվների հանձնաժողովին, ինչպես նաև հանրությանը տեղեկատվություն է տրամադրում հանրային միջոցների ծախսման նպատակային և արդյունավետ լինելու վերաբերյալ:

Չնայած այն հանգամանքին, որ հաշվեքննիչ մարմինն ամբողջովին անկախ է, այն սերտ համագործակցում է խորհրդարանի, մասնավորապես, ոլորտային հանձնաժողովի հետ: Հաշվեքննիչ մարմինը յուրաքանչյուր տարի իր ընթացիկ հաշվետվություններն է ներկայացնում խորհրդարանի համապատասխան հանձնաժողով, որը սահմանելով առաջնահերթությունները, դրանք քննարկում է իր նիստերում: Հարկ է նշել, որ հաշվեքննիչ մարմնի և հանձնաժողովի միջև աշխատանքային կարգով իրականացվում են խորհրդատվություններ, որոնք վերաբերում են նաև ընթացիկ հաշվետվությունների ներկայացման ժամկետներին: Մասնավորապես, երկու մարմինները համատեղ կազմում են ժամանակացույց, համաձայն որի հաշվետվությունները հանձնաժողով ներկայացնելու ժամկետները բաշխվում են ողջ տարվա համար: Սակայն նշյալ ժամանակացույցը կարող է փոփոխության ենթարկվել, պայմանավորված նոր հանգամանքների ի հայտ գալով:

Այդ գործառույթներն իրականացնող հանձնաժողովը յուրաքանչյուր գումարման խորհրդարանի ձևավորման սկզբում կանոնակարգ օրենքով պարտադիր ստեղծվում և ավանդույթի համաձայն ղեկավարվում է ընդհանույն ներկայացուցչի կողմից: Հանձնաժողովի նպատակն է հաշվեքննիչ մարմնի կողմից ներկայացված ընթացիկ հաշվետվությունների համապարփակ քննարկումը, դրանց վերաբերյալ մեկնաբանություններ ներկայացնելը, գրավոր և բանավոր (հաշվեքննվողից ամբողջ հաշվետվության կամ դրա մի մասի վերաբերյալ) փաստերի ձեռքբերումը, ինչպես նաև հարցումների իրականացումը: Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակներում իրականացնում է հետևյալ գործողությունները՝ կարող է հրավիրել, չներկայանելու դեպքում բերման ենթարկել հաշվեքննվողին, իրականացնել գործողություններ այլ փաստեր ձեռք բերելու ուղղությամբ, մասնավորապես այցելություններ կազմակերպել հաշվեքննվող մարմին, ինչպես նաև հետևել իր մեկնաբանությունների վերաբերյալ կառավարության արձագանքներին:

### Եզրակացություն

*Խորհրդարան-Բարձրագույն աուդիտորական մարմին փոխգործակցությունը արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է ստեղծել «Հաշվեքննության և աուդիտի» ենթահանձնաժողով և օրենսդրորեն կարգավորել Հաշվեքննիչ պալատի ընթացիկ հաշվետվությունների Ազգային ժողով ներկայացման նախատեսվող ժամկետները:*

### **Հետօրենսդրական վերահսկողություն**

Շտաբանդիայի և Ուելսի խորհրդարանները փորձ են կուտակել նաև հետօրենսդրական վերահսկողության գործառույթի իրականացման մասով: Հետօրենսդրական վերահսկողությունը խորհրդարանի հանձնաժողովների առավել կարևոր գործառույթներից է: Հանդիպումների ընթացքում շտաբանդական կողմը ներկայացրեց Շտաբանդայում հետօրենսդրական վերահսկողության իրականացման փորձն ու իրավական կարգավորումները, իսկ հայկական կողմը Հայաստանում հետօրենսդրական վերահսկողության իրականացման տեսլականը՝ հիմնաված միջազգային փորձի և

հայաստանյան իրողությունների վրա: Մասնավորապես Շոտլանդիայի նշյալ գործառույթն իրականացնող հանձնաժողովի ներկայացուցիչները հայտնեցին, որ վերահսկողության համար օրենքներ կամ օրենքների առանձին դրույթներ հիմնականում ընտրվում են հարցումների և ուսումնասիրությունների միջոցով: Այդպես, 2016 թվականի ընտրությունների արդյունքում ձևավորված Շոտլանդիայի խորհրդարանի հանրային աուդիտի և հետօրենսդրական վերահսկողության հանձնաժողովը հանրության և շահագրգիռ կողմերի շրջանում իրականացրել է հարցում, որի արդյունքում պահանջ է ներկայացվել վերահսկողություն իրականացնել մոտ 40 օրենքների նկատմամբ: Հանձնաժողովը ընտրել է 5՝ իր պատկերացմամբ առավել կարևոր օրենքներ, որոնք պետք է ենթարկի հետօրենսդրական վերահսկողության: Այդ աշխատանքը պետք է իրականացվի 5 տարվա ընթացքում՝ խորհրդարանի տվյալ գումարման ժամկետում: Ընդ որում, ոլորտային հանձնաժողովները ևս ընտրում են իրենց ոլորտներին վերաբերվող օրենքներ հետօրենսդրական վերահսկողություն իրականացնելու համար: Քննարկումների ընթացքում մանրամասն ներկայացվեց հետօրենսդրական վերահսկողության օրինակներից մեկը, որի մասին իրենց տեսակետները հայտնեցին քաղաքացիական հասարակության և կառավարության ներկայացուցիչները, որոնք այդ ընթացքում ունեցել են ակտիվ ներգրավվածություն: Ընդգծվեց հետօրենսդրական վերահսկողությունը ամբողջական փաթեթով իրականացնելու անհրաժեշտությունը, ինչը ենթադրում է, որ ենթաօրենսդրական ակտերը ևս պետք է պարբերաբար վերանայվեն համապատասխան օրենքների վերանայումից հետո:

Հանդիպումների ընթացքում ներկայացվեց ոչ միայն Շոտլանդիայի և Ուելսի հետօրենսդրական վերահսկողության, այլև առավել երկարատև փորձ և հարուստ ավանդույթներ ունեցող երկրների փորձը: Բանախոսները ներկայացրեցին Ֆրանսիայի, Շվեդիայի, Իտալիայի, Մոնտենեգրոյի, Մոլդովայի և մի շարք այլ երկրների հետօրենսդրական վերահսկողության ընթացակարգերն ու կանոնակարգերը, որոնք խմբավորված էին ըստ տվյալ երկրներում խնդրին տրված կարևորությունից և դրանց լուծման գործիքակազմից: Զարգացող երկրներից առավել հետաքրքիր է Մոլդովայի փորձը,

քանի որ այն համեմատաբար նոր է ներգրավվում նշյալ գործընթացում, սակայն արդեն իսկ իրականացրել է անհրաժեշտ զգայի կառուցակարգային և օրենսդրական կարգավորումներ: Նշվեց, որ Մոլդովայի խորհրդարանը մշակել է նաև հետօրենսդրական վերահսկողության իրականացման մանրամասն մեթոդաբանություն:

Կողմերը պայմանավորվեցին պահպանել աշխատանքային կապերը և իրականացնել պարբերաբար խորհրդատվություններ՝ Հայաստանի խորհրդարանում հետօրենսդրական վերահսկողության գործընթացում գործնական փուլի անցումն իրականացնելու ուղղությամբ:

### Եզրակացություն

*Շարունակել և խորացնել համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և ՀՕՎ կայացած համակարգ ունեցող երկրների խորհրդարանների հետ, Հայաստանում միջազգային չափորոշիչներին համահունչ և արդյունավետ ՀՕՎ համակարգի մշակման և ներդրման նպատակով:*

### **Բյուջետային գրասենյակ**

Շոտլանդիայի և Ուելսի խորհրդարանների ֆինանսական վերահսկողության բաժինների (բյուջետային գրասենյակներ) ներկայացուցիչների հետ աշխատանքային քննարկումների ձևաչափով քննարկվել են բյուջետային գրասենյակների բրիտանական փորձին առընչվող մի շարք առանցքային հարցեր: Մասնավորապես, պարզվեց, որ երկու խորհրդարանների բյուջետային գրասենյակների աշխատակազմներն էլ կազմված են 8 հոգուց և միջազգային ռաժորոշիչներով դասվում են միջին չափի բյուջետային գրասենյակների դասին: Աշխատակազմը բախկացած է տարբեր ոլորտների մասնագետներից (տնտեսագետներ, հաշվապահներ, ֆինանսիստներ և այլն):

Շոտլանդիայի և Ուելսի խորհրդարանների ֆինանսական վերահսկողության բաժինները իրենց խորհրդարանների պատգամավորներին ու հանձնաժողովներին մասնագիտական աջակցության տրամադրման շրջանակներում իրականացնում են նաև վերլուծություններ, որոնց հիման վրա տրամադրվում են օրենսդրական

նախաձեռնությունների կամ բյուջեի վերաբերյալ առաջարկությունների ֆինանսական ազդեցության գնահատականներ և նախահաշվարկներ, միևնույն ժամանակ նրանք որևէ ուղղակի պատասխանատվություն չեն կրում կատարված վերլուծությունների, տրված գնահատականների ու կանխատեսումների համար: Վերլուծությունների նկատմամբ պահանջարկը կախված է շահառուների հետաքրքրության շրջանակներից: Ֆինանսական վերահսկողության բաժինները կիրառում են վերլուծությունների այն մեթոդաբանությունները, որոնք կիրառվում են նաև մյուս պետական կառավարման մարմինների կողմից: Ընդ որում, դրանք սեփական վերլուծություններ չեն իրականացնում կառավարության մակրոտնտեսական կանխատեսումների և այլ ցուցանիշների վերլուծությունների ոլորտում:

Ֆինանսական վերահսկողության բաժիններն ակտիվորեն համագործակցում են հայտնի համալսարանական շրջանակների հետ, որոնք առանձին դեպքերում ոչ միայն գնահատում են իրենց կողմից կատարված վերլուծությունները, այլ նաև վերլուծություններ են տրամադրում վերոնշյալ բյուջետային գրասենյակներին: Ընդ որում, դրանք տրամադրվում են ինչպես փոխհամագործակցության շրջանակներում, այնպես էլ պատվերների (ֆինանսավորմամբ) հիման վրա:

Ֆինանսական վերահսկողության բաժիններն իրենց խորհրդարանների պատգամավորներին ու բյուջետային հարցերի հանձնաժողովին տրամադրում նե պարզաբանումներ աուդիտի մարմնի հաշվետվությունների և հաշվեքննության ենթարկված մարմնի ներկայացրած արձագանքի վերաբերյալ: Բացի այդ, վերոնշյալ բաժինները իրենց շահառուներին տեղեկատվություն են ներկայացնում կառավարության կողմից հարկաբյուջետային կանոնների պահպանման վերաբերյալ, ինչի համար դրանք իրականացնում են մոնիթորինգ:

Ֆինանսական վերահսկողության բաժինները պատրաստում և տրամադրում են համառոտագրեր հանրային լայն հետաքրքրություն ներկայացնող մակրոտնտեսական, ֆինանսական և այլ ցուցանիշների վերաբերյալ:

Ֆինանսական վերահսկողության բաժինները, տեղեկատվություն ստանալու նպատակով, ուղակիորեն դիմում են պետական կառավարման և տեղական մարմիններին, ինչպես նաև տարբեր գիտական հաստատություններին:

Ֆինանսական վերահսկողության բաժիններն իրենց խորհրդարանների պատգամավորներին ու հանձնաժողովների մասնագիտական աջակցություն են տրամադրում ոչ միայն նրանց կողմից ներկայացված հարցումների, այլ նաև սեփական նախաձեռնությամբ (պրոակտիվ):

### Եզրակացություն

*Ամփոփելով այցելության արդյունքները, կարող ենք ասել որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բյուջեբյուջե գրասենյակի զարգացման տեսանկյունից կիրառելի կարող են լինել հետևյալ իրողությունները՝*

- ՀՀ ԱԺ բյուջեբյուջե գրասենյակը տեղեկատվություն ստանալու նպատակով, ուղակիորեն դիմում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ևս,
- ՀՀ ԱԺ բյուջեբյուջե գրասենյակը պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին ու խմբակցություններին տեղեկատվություն և մասնագիտական աջակցություն է տրամադրում ոչ միայն ներկայացված հարցումների հիման վրա, այլ նաև սեփական նախաձեռնությամբ (պրոակտիվ),

ՀՀ ԱԺ բյուջեբյուջե գրասենյակը պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին ու խմբակցություններին տրամադրում է տեղեկատվություն կառավարության կողմից հարկաբյուջեբյուջե կանոնների պահպանման վերաբերյալ, ինչի համար իրականացնում է մոնիթորինգ:

